9524

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«21» 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0084-22

Ձեռնարկողը՝ ***«Մալկես» ՍՊԸ***
Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան 1 Ա

Գործունեությունը՝ ***Լեռնածորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2021-2023թթ. երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0084-22

<21> 06 2022 թ.

Սյունիքի մարզի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2021-2023թթ. Երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մալկես» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Լեռնաձոր բնակավայր

Ներածական մաս. Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասում 2021-2023թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասը գտնվում է Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական տարածքում: Այն տեղակայված է Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրից դեպի հյուսիս-արևելք՝ մոտ 0,9կմ հեռավորության վրա, Ողջի գետի ողողահունում և զբաղեցնում է մոտ 1,7հա տարածք 1468 - 1478մ բացարձակ բարձրությունների միջակայքում:

Գործունեության ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական այլ հողատեսքեր: Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, հետախուզական փորվածքների անցման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը համապատասխանում է 1-2 խմբին և արդյունաբերական կարգի պաշարների եզրագծման համար հետախուզական ցանցի խտությունն ընտրված է C1 կարգով: Ընդ որում՝ հաշվի առնելով հանքավայրի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար

հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսնվում է իրականացնել մինչև 3.0մ խորությամբ 10 հետախուզահորերի միջոցով:

Հանքավայրի հետախուզումը նախատեսվում է կատարել միմյանցից 20,0-80,0մ հեռավորությամբ տեղադրված հետախուզահորերով: Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական C1 կարգով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ ՀՍՏ ԳՈՍՏ 8267-93 «Խիճ և կոպիճ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» և ՀՍՏ ԳՈՍՏ 8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար Տեխնիկական պայմաններ» պահանջների:

Լեռնածորի ԱԿԽ հանաքավայրի «Մալկես» տեղամասի սահմանները ARMWGS-84 համակարգով եզրագծվում են հետևյալ կոորդինատներով.

X=8604680.5740	Y=4337339.5125
X=8604662.7389	Y=4337357.5345
X=8604674.4295	Y=4337400.0119
X=8604701.3708	Y=4337439.0782
X=8604821.3932	Y=4337539.4958
X=8604932.3518	Y=4337614.2891
X=8604950.0983	Y=4337590.2247
X=8604934.2360	Y=4337554.8081
X=8604919.6596	Y=4337535.8505
X=8604874.4054	Y=4337513.8531
X=8604829.5414	Y=4337479.7520
X=8604776.8065	Y=4337426.3177
X=8604761.9072	Y=4337416.0845
X=8604742.0855	Y=4337395.2069
X=8604731.4104	Y=4337387.2442
X=8604697.5629	Y=4337350.8472
X=8604680.5740	Y=4337339.5125

Հանքավայրի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի 0.2կմ:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում, 300.0մ^3 ընդհանուր ծավալով: Նախատեսվում է 10 հետախուզահորերի անցում, որոնց խորությունը նախատեսվում է 3.0մ, կտրվածքը՝ 3.0մ^2: Երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են լցման, որը նախատեսվում է իրականացնել ձեռքով: Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը վերցվում է 270մ^3

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզառուները: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 300.0 գ.մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում չորս կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի, ավազի արտադրության համար: Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից: Նախատեսվում է վերցնել 20 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար՝ 10 նմուշ քիմիական անալիզների և 10 նմուշ միներալոգոպետրոգրաֆիական ուսումնասիրությունների և փխրեցման գործակցի որոշման համար: Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.3x0.1մ չափերով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 30 կգ-ի: Նախատեսվում է յուրաքանչյուր հետախուզահորից ունենալ մեկական նմուշ երկու ուսումնասիրությունների համար: Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով: Բոլոր հետախուզահորերում կիրականացվեն ռադիոմետրիկ դիտարկումների՝ պրոֆիլացման: Դիտարկման կետերի ֆիքսումը իրականացվելու է համաձայն գործող նորմերի՝ հետախուզահորերում 2 կետ 1մ³ վրա: Նախատեսվում է նաև իրականացնել ռադիոչափերի էտալոնացում և զգայունության ստուգում: Ռադիոմետրիկ աշխատանքները նախատեսվում է իրականացնել նման աշխատանքների համար նախատեսված СРП-68-02 մակնիշի սարքով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել հանքավայրի ապագա շահագործման ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

Հայցվող տարածքի նախնական դաշտային ուսումնասիրության ժամանակ ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ ինչպես նաև դրանց աճելա և ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Բուն Լեռնածորի ավազակոպճային հանքավայրի տարածքում ինչպես նաև 3.0կմ շառավղով՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության հուշարձաններ բացակայում են: Պատմության և մշակույթի հուշարձանների ամենամոտը ուսումնասիրվող տարածքից գտնվում է ավելի քան 8,0կմ հեռավորության վրա:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Հետախուզական փորվածքները կտեղադրվեն Ողջի գետի հիմնական հունից 10-15մ հառավորության վրա: Միաժամանակ, Ողջի գետի ջրերի որակի վրա որևիցե բացասական ազդեցությունը կանխելու նպատակով կիրականացվի ջրերի մոնիթորինգ:

Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնում իրականացվելու է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո՝ մոտեցող ճանապարհի վրա և հետախուզահորերի անցման արդյունքում խախտված հողերում:

Նախատեսվում է, որ նշված հատվածների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ընկերությունը կարող է սեփական միջոցներից ծախսել մոտ 400,000 ՀՀ դրամ գումար:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացնել մոտակա լիցքավորման կետերում,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին՝ տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,

- դիզելային շարժիչների սպասարկումը կազմակերպել տեխ. սպասարկման կայաններում,

- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,

- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

- փոշենստեցման նպատակով ավտոճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,

- կախտված տարածքների ռեկուլտիվացիա,

- տարածքի ցանկապատում կենդանիների պատահական մուտքը սահմանափակելու համար:

Լեռնածորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում «Մալկես» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ:

- Ողջի գետի ջրերի մոնիթորինգ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 150.0հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Քաջարան համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արարատի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մալկես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2021-2023թթ. Երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հ. Մեսրոպյան